ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ԵՐԵԿ ԱՆՈՒՄ

Հունվարի 30-ին Երևան ժամանեց Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի դելեգացիան հետևյալ կազմով. Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ա. Գ. Շանիձե, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ՝ Կ. Ս. Կեկելիձե և Ն. Ա. Բերձենիշվիլի, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի գիտնական քարտուղար Ս. Մ. Ժղենտին։

Կայարանում հյուրերին դիմավորեցին Հայկական ՍՍՌ գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Վ. Գուլքանյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Գ. Ղափանցյանը, Ա. Հովհաննիսյանը և ուրիշները։

Հյուրերի ժամանման օրը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայում տեղի ունեցավ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի դելեգացիայի հետ համատեղ հասարակական գիտությունների բաժանմունքի նիստ։

Նիստում հանդես եկան Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ա. Գ. Շանիձեն, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Վ. Գուլքանյանը, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Կ. Ս. Կեկելիձեն և Ն. Ա. Բերձենիշվիլին, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Գ. Ղափանցյանը և Ա. Հովհաննիսյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ղարիբյանը։

Նիստում որոշում ընդունվեց մայիսի վերջին Թբիլիսիում և Երևանում հրավիրել երկու ռեսպուբլիկաների ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ գիտական սեսիա։

Նիստը նախապես քննարկեց համատեղ գիտական սեսիայի զեկուցումների թեմաները։

Երկու ռեսպուբլիկաների ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների մայիսին հրավիրվող համատեղ գիտական սեսիան կնպաստի Վրաստանի և Հայաստանի գիտնականների միջև գիտական կապերի հետագա ամրապնդմանը։

***

Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի դելեգացիան Երևանում գտնվելու ժամանակ կծանոթանա Հայաստանի պատմական և տեսարժան վայրերին։

(ՀՀԳ)